13144

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

« 03 » 10 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0148-22

Ձեռնարկողը՝ ***«Արփսոլար» ՍՊԸ***
ք.Երևան, Ն. Ադոնցի փող., 8շ., բն. 170

Գործունեությունը՝ ***Շողակաթ համայնքում նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի՝ պարտականությունները կատարող Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0148-22

«03» 10 2022թ.

Գեղարքունիքի մարզի, Շողակաթ համայնքում նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Արտսոլար» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Շողակաթ համայնք Շորժա-Վարդենիս մայրուղի 4

Ներածական մաս. «Արտսոլար» ՍՊ ընկերության կողմից նախատեսում է Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքում իրականացնել ֆոտոէլեկտրական կայանի նախագծման, կառուցման և շահագործման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, 5-րդ մասի, 3)-րդ կետի, «գ» ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Աշխատանքային գծագրերի հիմքը հանդիսանում են՝ տեխնիկական պայմանները՝ NՏՊ-541-110/0382-1, 22.11.2021թ. գրությամբ, տրված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից, ինժեներա-հետախուզական նյութերը շահագրգիռ կազմակերպությունների հետ համաձայնությունները:

Նախագիծը կատարված է ըստ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիայի՝ ԼԷ №0654:

Նախատեսվող գործունեության տարածքի նպատակային նշանակությունը հանդիսանում է էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների: Տարածքի գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի: Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 5.46 հա:

Նկարագրական մաս. Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայքի տարածքում «Արտսոլար» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է կառուցել 3.22 ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային էլեկտրակայան:

Նախատեսվող արևային ֆոտոէլեկտրական կայանը՝ 40°30′22.05″ աշխարհագրական լայնության և 45°19′42.85″ աշխարհագրական երկայնության կոորդինատներով տեղակայված է լինելու ծովի մակարդակից 2010մ բարձրության վրա:

Նախատեսված տարածքը հարթ՝ խիստ գերարածեցված է, ինչի պատճառով հողի ծածկույթը շատ ցածր է՝ 40%-ից պակաս:

Գործունեության տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների որևէ խմբի պատկանող տեսակներ, հայտնաբերված չեն Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ բուսատեսակներ, գործունեության տարածքում մակերևութային ջրերի հոսքեր չկան:

Հնագիտական և պատմա-մշակութային առումով Շողակաթ համայքում նախատեսվող արևային կայանի տարածքը որևէ խոչնդոտ չի առաջացնելու:

Վարչատարածքային առումով կայանը տեղակայված է լինելու Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի վարչական սահմաններում համայքից 4 կմ հյուսիս-արևելք, Արտանիշ բնակավայրից դեպի Շողակն տանող M14 մայրուղու աջ կողմում:

Նախատեսվող աշխատանքների մեջ ներառված են լինելու 110/35/10կՎ տրանսֆորմատորային ենթակայանը, ԵԿ-ի հողանցման համակարգերը:

Կառուցվող «Արտսոլար» 3.22 ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային էլեկտրակայանը Հայաստանի էլեկտրական ցանցերին միացնելու համար նախատեսվում է «Արտսոլար» արևային կայանի տարածքում կառուցել 1x6300 կՎԱ հզորությամբ 110/35 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայան, որի սնումը իրականացվելու է «Արեգունի» 110 կՎ օդային գծի թիվ 35 խարսխային հենարանից, ճյուղավորման սխեմայով, կառուցելով 30 գ.մ երկարությամբ 110 կՎ օդային գիծ դեպի ԵԿ-ի 110 կՎ լարման մուտքային պորտալ:

«Արտսոլար» ենթակայանի 110 կՎ ԲԲՍ-ում նախատեսվում է տեղադրել 110/35/10 կՎ լարման եռաֆազ եռափաթույթ ТДТН-6300 110/35/10 կՎ մակնիշի ուժային տրանսֆորմատոր:

Տրանսֆորմատորի 110 կՎ լարման շղթաներում տեղադրվելու են՝ -ВРС-110НС-35-20/1600У մակնիշի էլեգազային անջատիչ, ՁՂիԾ-110 մակնիշի հոսանքի տրանսֆորմատոր, ԾԽՂ-110 մակնիշի լարման տրանսֆորմատոր, երկու հատ երկկողմանի հողանցման դանակներով ՀԾԺի-110-2Б/1000ձ1 մակնիշի բաժանիչ և Կկծ-110 մակնիշի գերլարումներից արգելափակիչ: 110կվ ԲԲՍ-ի մուտքում նախատեսված է տեղադրել կիխ-110շ3» մակնիշի մետաղական գծային պորտալ «Արեգումի» ՕԳ-ի թիվ 35 խարսխային հենարանից ներանցումն իրականացնելու համար:

Հենասյուները բացակայում են, քանի որ կայանից ցանցին միացումը նախատեսված է ներանցումով:

110 կՎ ԲԲՍ-ի դողային համակարգի շղթաները հավաքվելու է АС-150/24 հաղորդալարերով: ԵԿ-ի 110 կՎ ԲԲՍ-ում աշխատանքի բնականոն ռեժիմում հաղորդալարերի հեռավորությունը հողի մակերևույթից կլինի 3,7մ-ից ոչ պակաս:

«Արտսոլար» արևային կայանում նախատեսված է տեղադրել 35/0,8-0,8 կՎ լարման 6300 կՎԱ հզորությամբ երկթաթույթ երկփեղկված փաթույթներով եռաֆազ տրանսֆորմատորով ենթակայան:

Ենթակայանի 35 կՎ ԲԲՍ-ում նախատեսվում է տեղադրել 35 կՎ լարման բլոկ, որի վրա կտեղադրվի ելքային երկու հողանցման դանակներով բաժանիչ, հոսանքի տտանսֆորմատորներ, հենարանային մեկուսիչներ և գերլարման արգելափակիչներ:

ԵԿ-ի սեփական կարիքների համար 10 կՎ լարման կողմում նախատեսվում է տեղադրել 40կՎԱ հզորությամբ 10/0,4կՎ լարման ТМթ-40/10 մակնիշի երկփաթույթ եռաֆազ տրանսֆորմատոր:

110 կՎ ենթակայանի շանթապաշտպանությունը ապահովելու է պորտալների վրա տեղադրած շանթարգելներով:

Ենթակայանի սարքավորումները արտաքին գերլարումներից պաշտպանելու համար տրանսֆորմատորի 110, 35, 10 կՎ ներանցիչների վրա տեղադրվելու են գերլարման արգելափակիչներ:

110 կՎ սարքավորումները տեղադրվելու են հավաքովի մետաղական հենարանների վրա, իսկ ԵԿ-ի հողանցման համար նրա շուրջը նախատեսվում է ստեղծել հողանցման եզրագիծ:

110 կՎ լարման կողմում առանձին արկղի մեջ կտեղադրվի երկկողմ հաշվիկ իրականացնող էլ էներգիայի հաշվառքի էլեկտրոնային սարք:

Կայանի գեներատորային մասը նախատեսված է կառուցել մոնոբյուրեղային ֆոտովոլտաիկ մոդուլներով, որոնք 16 հատ 200 կՎտ ելքային հզորությամբ ինվերտորների փոփոխական լարման ելուստներից մալուխներով միանալու են ենթակայանի 0.8 կՎ գլխավոր ընդունիչ վահաններին, նախապես տարածքում կառուցելով 35/0.8 կՎ (3250կՎԱ Huawei STS3000K-H1)լարման ենթակայան, որը միյանալու է 110/35 կՎ (6300 կՎԱ) ենթականային:

110/35 և 35/0.8 ենթակայանների միջոցով կայանը ներանցումով միանալու է «Արեգունի» 110 կՎ օդային գծի մոտակա խարիսխային հենարանին:

Ընտրված են Longi Solar արտադրության 20.9% ՕԳԳ, 535 Վտ առավելագույն հզորությամբ միաբյուրեղ LR5-72HBD մոդելի ֆոտովոլտային մոդուլներ՝ ընդհանուր քանակը կազմելու է 7,488 հատ:

Գերլարումներից ներքին պաշտպանությունը իրականացվելու է ինվերտորներում DC և AC կողմերում T2 պարպիչների միջոցով:

Հողանցումը նախատեսվում է իրականացնել ինչպես հաստատուն, այնպես էլ փոփոխական հոսանքի տիրույթներում, որոնք ունեն ընդհանուր կապ:

Կայանի տարածքը ցանկապատվելու է 2մ բարձրությամբ մետաղացանցով, կայանի մոնիթորինգի և անվտանգության համակարգերի սնուցումը նախատեսվում է 5 կՎԱ հզորությամբ անխափան սնուցման սարքի միջոցով, իսկ տվյալների համակարգման համար առանձնացվելու է սերվերային սենյակ:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝ նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բնական բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները կապված կլինեն.

- Մթնոլորտային օդ արտանետումներով՝ աշխատանքների ընթացքում կիրառվող ավտոտրանսպորտը և սարքավորումները դառնալու են վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր:

Փոշու արտանետումներ կանխատեսվում են աշխատանքային հրապարակների շինարարության, ճանապարհների վերանորոգման և կառուցման, ինչպես նաև աշխատանքները սպասարկող ավտոտրանսպորտի տեղաշարժման ժամանակ:

Նախնական հաշվարկներին համաձայն, տարածքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի օքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

- Ջրային ավազանին հասցվող վնասը մոտ է զրոյականին:

Աշխատանքների ընթացքում կիրառվող և նախատեսվող միջոցառումները կբացառեն տարածքում կենցաղային կոյուղաջրերի տարածումը:

- Հողային ծածկույթի վրա վրա բացասական ազդեցություններ չեն նախատեսվում, քանի որ այն հատվածում որտեղ հողի բերրի շերտը մեծ չափերի է հասնում հանվելու է միայն բուսաշերտը շուրջ 20 սմ:

Բուսական և կենդանական աշխարհի վրա աշխատանքների ընթացքում դրսևորվելու է որոշակի բացասական ազդեցություն, սակայն ազդեցությունը լինելու է չնչին, քանի որ տարածքը շատ փոքր է որպեսզի զգալի ազդեցություն ունենա տարածաշրջանի կենդանական աշխարհի վրա: Բուսական աշխարհին հասցվող հավանական վնասը կլինի աննշան, քանզի

տարածքը աղքատ է բուսական աշխարհով և աչքի են ընկնում որոշ տափաստանային թփատեսակներով:

Նախատեսվող գործունեության նախապատրաստական և շահագործական փուլերում առաջացող թափոնատեսակները մեծածավալ չեն լինելու:

Առաջացող թափոնատեսակներն են՝

1. պատի բետոնե իրեր, սյուներ, փչացած և աղտոտված բետոնային սալիկներ՝ ծածկագիրը 39901200 01 00 4, վտանգավորության դասը՝ 4-րդ դաս, զանգվածը 17 տ/տարի:
2. Հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր՝ ծածկագիրը 54100207 02 033, վտանգավորության դասը՝ 3-րդ, զանգվածը 5 տ/տարի:
3. Յուղոտված լաթեր՝ ծածկագիրը 58200600 01 01 4 վտանգավորության դասը՝ 4-րդ, զանգվածը 0.4 տ/տարի:
4. Ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ՝ ծածկագիրը 31401200 01 00 4 վտանգավորության դասը՝ 4-րդ, զանգվածը 0.7 տ/տարի:
5. Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը 15%-ից ավել՝ ծածկագիրը 31402303 04 03 3, վտանգավորության դասը՝ 3-րդ, զանգվածը 0.7 տ/տարի:
6. Սև մետաղի ջարդոն՝ ծածկագիրը 35131100 01 00 4, վտանգավորության դասը՝ 4-րդ, զանգվածը 2 տ/տարի:
7. Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ՝ ծածկագիրը 91200400 01 00 4, վտանգավորության դասը՝ 4-րդ, զանգվածը 0.5 տ/տարի:

Շինարարական աշխատանքների ընթացքում կառաջանա շին. աղբ, որը կտեղափոխվի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Տարածքում թափոնների պահման տեղամասը և հարակից տարածքը ցանկապատվելու է: Կոմունալ կենցաղային թափոնները կուտակվելու են ադմինիստրատիվ շենքին կից նախատեսված աղբամանում, որից հետո համայնքային կոմունալ ծառայությունը իրականացնելու է թափոնի տարածքից հեռացում դեպի համայնքային աղբատեղի:

Նախատեսում է մինչ թափոնների առաջանալը իրականացնել թափոնների անձնագրավորում, որից հետո տրամադրում լիցենզավորվող կազմակերպությանը:

Տարածքում վտանգավոր թափոնների ժամանակավոր պահման վայրում կհավաքվեն առաջացող թափոնները, որից հետո կտրամադրվեն լիցենզավորվող կազմակերպությանը, որը կիրականացնի արդի տեխնոլոգիաները թափոնները վերամշակելու կամ առնվազն նախատեսված պայմաններով պահելու համար:

Առաջացող թափոնները միանվագ չեն առաջանալու, այլ խոտանվելու են ժամանակի ընթացքում, ուստի դրանց պահեստավորումը լինելու է փոքր ծավալներով: Խոտանվածները փոխարինվելու են նորերով և տեղափոխվելու են լիցենզավորված կազմակերպության տարածք:

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ, որոնց հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսներ մեղմելու նպատակով նախատեսվում է հետևյալ միջոցառումները՝

- վտանգավոր նյութերի և մետաղական թափոնների փոխանցում համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,
- շինարարական թափոնների տեղափոխում և տեղադրում համայնքի կողմից հատկացված վայր,
- շինարարության ժամանակ առաջացած վտանգավոր թափոնների հանձնում վնասազերծում կատարող կազմակերպություններին:

Հաշվի առնելով, որ արևային կայանի համար նախատեսված տարածքը հեռու է արդյունաբերական հարթակներից և խոշոր բնակավայրերից, ինչպես նաև այն հանգամանքը,

որ ՖՎ կայանի շահագործման ընթացքում աղտոտումը գործնականում զրոյական է, օդային ավազանի աղտոտման մակարդակը գնահատվում է ցածր:

Նախատեսվող գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներն ու նյութերը մատակարարվելու են Երևանից: Տարածքում փակ ժամանակավոր պահեստարանում կարճաժամկետ պահպանվելու են մինչև կիրառվելը, երկարաժամկետ կտրվածքով շինանյութերը և տեխնիկական միջոցներ չեն պահպանվելու, այդ իսկ պատճառով պահման լրացուցիչ միջոցառումներ չեն նախատեսվելու:

Արևային ֆոտոէլեկտրականի շինարարության արտանետումների տնտեսական վնասը կկազմի՝ 30400 ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- նավթամթերքների նվազագույն անհրաժեշտ քանակի պահեստավորում անթափանց տակառներով աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի թափքում: Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքների իրականացում համապատասխան ծառայություն մատուցող կայանում,
- շինարարկան աշխատանքների և շահագործման փուլի հետ կապված օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար: Այդ աշխատանքները կատարվելու են մասնագիտացված ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնվում որպես մետաղական ջարդոն վերամշակող ընկերությանը՝ պայմանագրային հիմունքներով,
- մեքենաների, կտրման հաստոցի, այլ սարքավորումների շահագործում տեխնիկական սարքին վիճակում,
- առաջացող թափոնների անվտանգ կառավարում,
- օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:
- աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Ինչպես նշված է գնահատման հաշվետվությունում նախատեսվում և կարևորվում է նաև հողի բերրի շերտի հանման և պահպանման միջոցառումները՝ հողի բերրի շերտի ամենաչնչին հատվածն, որը նախատեսվում է հանել և կուտակել, աշխատանքների իրականացման ընթացքում հանվելու և կուտակվելու է հետագայում տարածքի բնապահպանական կայունության հավասարակշռման միջոցառումների իրականացման նպատակով:

Աշխատանքների ավարտից հետո օժանդակ այն բոլոր հատվածներում, որտեղ տեղակայված կլինեն աշխատակիցների ժամանակավոր տեղակայման վայրերը, ապամոնտաժվելու և վերականգնվելու են:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ, որոնք են՝ հրդեհի առաջացումը, հեղուկ նյութերի արտահոսքը, աշխատողների վնասվածքները, շահագործվող տեխնիկայի հետ վթարները: Հնարավոր արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար իրականացվելու են հետևյալ մի շարք միջոցառումները՝ նախքան աշխատանքների սկիզբը, բոլոր աշխատողների այդ թվում նաև վարորդների հրահանգավորման անցկացում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, նախքան աշխատանքների սկիզբը շինարարական հարթակի և տրանսպորտային միջոցների հագեցվածություն հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, առաջին բուժ. օգնության ցուցաբերման վերաբերյալ հրահանգավորում և այլն:

Որպես արտակարգ իրավիճակների կանխարգելման և կառավարման միջոցառումներ կիրականացվեն նաև հետևյալ միջոցառումները՝ շինարարական աշխատանքների տեղամասերում հրդեհաշիջման սկզբնական միջոցների տեղադրում, հակահրդեհային անվտանգության պաստառների փակցնում, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումների տեղադրում և այլն, նախատեսվում են նաև կենսաբազմազանության պահպանության, հնարավոր անբարենպաստ օդրևութաբանական պայմանների դեպում մի շարք միջոցառումներ, որոնք ամրագրված են գնահատման հաշվետվությունում:

Շինարարության ընթացքում կատարվելու են տեղանքի հարթեցման աշխատանքներ, որի արդյունքում տեղի է ունենալու լանդշաֆտի փոքրածավալ փոփոխություն:

Հողային աշխատանքների ծավալները հետևյալն են.

- կանխատեսվող բուսահող- 5400 խմ
- խրամուղիների քանդման արդյունքում հողային աշխատանքներ- 500 խմ
- ենթակայանների համար կատարված հողային աշխատանքներ- 150 խմ

Ընդհանուր հողային աշխատանքներ- 8500 խմ

Ռեկուլտիվացիայի մակերես 5.4 հա

Փռված բուսաշերտի միջին հաստություն 10 սմ

Ռեկուլտիվացիայի ենթակա տարածքը իրենից ներկայացնում է արևային կայանի տարածքը և ենթակայանի տարածքը: Ռեկուլտիվացիայի աշխատանքների ընթացքում նախատեսվում է հավաքված բուսաշերտի փռում արևային կայանի տարածքով, որից հետո իրականացվելու է սիզախոտի ցանում: Արդյունքում հնարավոր կլինի հետագայում տարածքը օգտագործել որպես արոտավայր:

Ռեկուլտիվացիայի համար նախատեսվող գումարը կկազմի 5 500 000 ՀՀ դրամ:

Արևային ֆոտովոլտային կայանի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Շինհրապարակի հողածածկի արտաքին զննման իրականացում՝ շաբաթական պարբերությամբ:
2. Շինհրապարակի օդի փոշոտվածությանը հետևում վիզուլ և նմուշառման մեթոդով՝ ամսեկան մեկ անգամ
3. Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի շարժիչների ստուգում՝ ամսական պարբերականությամբ:
4. Սորուն շինանյութերի պահեստների հատակների վիճակի ստուգում՝ շաբաթական պարբերությամբ:
5. Փոշեգոյացումը կանխելու նպատակով տարածքի ջրցանի իրականացում:
6. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ:
7. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ հաճախականությամբ:

Մշտադիտարկումների համար նախատեսվող ծախսերն ամբողջ շինարարաության ընթացքում կկազմի 500 000 ՀՀ դրամ

Մշտադիտարկումների և բնապահպանական ազդեցությունների կանխարգելման համար նախատեսված գումարը կկազմի 1 000 000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքում նախատեսվող արևային ֆոտովոլտային կայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Գեղարքունիքի մարզի, Շողակաթ համայնքի ղեկավարի նստավայրում անցկացվել են չորս հանրային

քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Առողջապահության, Արտակարգ իրավիճակների, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետարանից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, տեղական ինքնակառավարման մարմիններից, որոնց կողմից ներկայացված կարծիքներն ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
2. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամաններով հաստատված ՀՀ-ում գործող սանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարումը:
3. Ապահովել և պահպանել՝ շրջակա միջավայրի, ինչպես նաև մարդու առողջության, անվտանգության և տեխնիկական անվտանգության ՀՀ-ում գործող նորմերի պահանջները:

Նախագծի վերջնական տարբերակում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից 22.11.2021թ. տրված NՏՊ-541-110/0382-1 տեխնիկական պայմանի պահանջները:

Մինչ շինարարության սկսելը, շինարարության ընթացքում և ավարտից հետո որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝

- սահմանազատել և ժամանակավոր ցանկապատել շինարարական հրապարակը, անցկացնել լուսավորություն և տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,
- նախքան տարածքում շինարարական աշխատանքներ կատարելը իրականացնել հնագիտական ուսումնասիրություն: Սահմանազատել տարածքը (հետագայում որևէ ազդեցություն չլինելու համար):

Խստորեն պահպանել պատահական գտածոների հայտնաբերման կանոնները; Անձանակազմին տրամադրել տարածքի պատմաշակութային հուշարձանների մասին տեղեկատվություն, սահմանազատել հուշարձանները և ապահովել գնահատման հաշվետվությունում տրված, աղյուսակում բերված հուշարձանների անխաթարությունը,

- վերականգնել և կրկնակի օգտագործել վթարված մասերը,
- ֆոտոէլեմենտներ պարունակող պանելները չթաղել կամ չհավաքել աղբավայրերում բաց վիճակում,

- թափոնների կուտակումը կամ պահումը իրականացնել բնակելի տարածքներից դուրս,
- կայանի շահագործման ժամկետի սպառման դեպքում (կապար, քրոմ, կադմիում, սիլիցիում և այլ նյութեր) պարունակող ֆոտովոլտային վահանակները ժամանակավորապես պահստավորել ձեռնարկողի՝ այդ նպատակով առանձնեցված պահեստում, ինչպես նաև շահագործման ժամկետի ավարտից հետո, ժամկետանց կամ վնասված արևային ֆոտովոլտային մոդուլների, որպես վտանգավոր թափոնատեսակների տեղափոխումը, վերամշակումը, վնասազերծումը իրականացնել ձեռնարկող կամ կապալառու ընկերության միջոցներով, Շողակաթի համայնքապետարանի վերահսկողությամբ,
- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնները հեռացնել մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով և տարածքում բացառել թափոնների բաց այրումը,
- ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը,
- շահագործումի ավարտից հետո կատարել հողի և լանդշաֆտի վերականգնողական միջոցառումներ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արտսոլար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքում նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջատար մասնագետ՝ Նելլի Նասիբյան